

138. Փաւստինուպօլիս.– Յառաջագոյն կոչէր Հահալ, Hahale, ըստ Կապիտոլինոսի:

142. Վաներ.– Յիշի նախ առ Բ Թորոսիւ, յորմէ գաղտագողի կորզեաց զայն՝ վատշուէր եղբայր նորին Սլեհ, ապաւինեալն ՚ի հօրն Նուրետտին: Զայս աւանդէ Միխայէլ Ասորի, յորմէ երկրորդելով ժամանակագիր մեր՝ Վանաւէր գրէ զանունն:

143. Գումբէթփոր.– Այսպէս արժան համարէի կարծեօք՝ ընթեռնուլ զգրեալն Cumbethfor ՚ի Վիլլեարանտայ. գտի արդ Գումբէթփոր լինել, ըստ ժամանակագրի մերոյ, որ եւ յաւելու, եթէ «այժմ Իլիճա կոչէ Թուրքն, յորմէ ջերմ ջուր բղխի». եւ ցայսվայր եւ անդրագոյնս եւս ասելով Հայոց հալածեալ զամիրայն Տարսոնի, յամի 1368, ցուցանէ ՚ի հարաւոյ արեւմտից Սսոյ լինել գտեղին. եւ զի յարեւմտից Մասայ եւս էր, արժան է քննել ՚ի միջոցի նշանակեալ երից կողմանց՝ եթէ գուցէ՝ անդ ջերմաբուղիս աղբիւր, առ ՚ի հաւաստել զղիբս Գումբէթփորի: Թերեւս զայս եւ զԻլիճա նոր անունն՝ նշանակէր յիշեցեալն ՚ի պարզեազրին Լեւոնի լատինարէն Bagnigum, զոր գուշակէի լինել յանուն Բաղանեաց (143), եւ արդ աներկբայ համարիմ լինել զսա Բաղնէկունք գիւղ մերձ յԱտանա, ՚ի գահս Կիլիկիոյ, որպէս աւանդի ՚ի յիշատակարանի աւետարանի միոյ՝ գրելոյ անդ ՚ի թուին ԶԽԱ (1292):

144. Գոներ.– Ոչ միայն վանք, այլ թուի յառաջ քան զայն եւ գեղ բնակութեան լինել յայս անուն, զի բնիկ հայրենիք Յովհաննու Արքայեղբոր կոչի տեղին. որով եւ յայտնի՝ եթէ ոչ նոյն՝ գոնեա մերձ լինել ՚ի Կոստանդնոյ (146) գիւղ՝ շինեալ ՚ի հօրէ նորին ՚ի Պայլէն մեծէ:

146. Ծանօթ. 2. Մասամբ եւեթ ընդօրինակեալ է Աստուածաշունչ գիրքս յԱրքայեղբայրն Յովհաննէ, որ գրէ յաւարտ գրոցն Սիրաքայ. «Զեղկելիս ոգի, զՍիրաքայս գրող եւ զտառիս ստացող... զՅոհ. եպիսկոպոս, զեղբայր բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ, եւ զորդիս Մեծին Կոստանդեայ, աղաչեմ... յիշել սրտի մտօք»: Գրիչ մատենին է